ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2013-2016 ԹԹ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար Ս.Սուքիասյան

Հաստատվել է համայնքի ավագանու նիստում 18-01-2013թ. արձանագրություն N1,

Որոշում N3

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴՐԻՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքն ունի 1-4 տարեկան 113 երեխաներ: Նրանց մեծ մասը մանկապարտեզ հաճախելու կարիք ունեն: Երեխաների մեծ մասը նախադպրոցական դաստիարակություն չեն ստանում, որը հետագայում ազդում է նրանց ձևավորման վրա:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է՝

- Հրավիրել ավագանու նիստ
- Հրավիրել համայնքի ժողով
- Կազմել ծրագրի իրականացման կոմիտե՝ կատարվող աշխատանքները վերահսկելու համար
- Կնքել պայմանագիր Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, որի համաձայն ծրագրով պահանջվող գումարի 90%-ը կհատկացվի հիմանդրամի կողմից , իսկ 10%-ը համայնքի բյուջեից և համայնքի ներդրումից:

ԾՐԱԳԻՐ 2

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Վերջի տարիներին մոտ 40 տարվա վաղեմություն ունեցող խմելու ջրագիծը շարքից դուրս է եկել և նորոգման կարիք ունի: Ընդառաջելով համայնքի բնակիչների դիմումներին , այս ծրագրով նախատեսվում է հիմնական նորոգման ենթարկել <<Նորավանքի Ձոր>> -ից եկող ջրագիծը:

Ծրագրի իրականացման համար նախնական հաշվարկներով անհրաժեշտ է 1,5 մլն դրամ: Ծրագրի ֆինանսավորումը կիրականացվի համայնքի 2013թ.-ի տարեկան բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳԻՐ 3

<< ՉԻՎԱ >> ԳԵՏԻ ԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՄՐՋԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Գետի գարնանային վարարումների և սելավների ժամանակ խիստ դժվարություն է առաջանում <<Չիվա>> գետի ձախ հատվածում գտնվող գյուղատնտեսական հողատարածքների մշակման աշխատանքների իրականացման գործում : Հիմանական պատճառը այն է, որ տվյալ տարածքում հողամաս ունեցող բնակիչները չեն կարողանում անցնել գետը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է ունենալ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր , որի ֆինանսավորումը կկատարվի համայնքի 2013 թ. Բյուջեից:
Ծրագրից սպասվող արդյունքը կայանում է նրանում, որ արդյունավետ կմշակվի 8 հա խաղողի և պտղատու այգիները:

ԾՐԱԳԻՐ 4

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ 350 ՄԵՏՐ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՅՈՒՂՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքի 4-րդ փողոցի կոյուղին կառուցվել է փողոցի բնակիչների կողմից 1975-1976թթ. : Անցած տարիների ընթացքում մետաղյա խողովակը քայքայվել և շարքից դուրս է եկել կեղտաջրերը ողողում են ինչպես 4-րդ փողոցը, այնպես էլ գյուղի գլխավոր փողոցը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է կազմել նախագիծ և նախահաշիվ: Մոտավոր հաշվարկներով նախահաշվային գինը կազմում է 800000 դրամ: Այն կիրականացվի համայնքի 2013թ. բյուջեի գումարների միջոցով:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՅՍԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

Համայնքի փողոցային լույսերը կառուցվել է 1970-ական թվականներին: 1991-1994թթ. Անցման ժամկահատվածում ոչ մի ուշադրություն չի դարձվել փողոցային լույսերի շահագործման պահպանման վրա:

Ֆինանսական միջոցների պակասի պատճառով ներկա դրությամբ այն լիովին վերականգնել և շահագործել հնարավոր չէ: Նպատակահարմար է այն շահագործել մասնակիորեն: Տեղակայել նոր 20 հատ լուսամփոփներ բնակավայրի կարևոր վայրերում: Լուսամփոփների տեղակայումը և շահագործումը կիրականացվի համայնքի 2013թ. տարեկան բյուջեի գումարների հաշվին:

ԾՐԱԳԻՐ 6

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՆ ԿԱՄՐՋԻ ՆՈՐՈԳՈՒՄ

Հաշվի առնելով, որ համայնքը գտնվում է սահմանամերձ գոտում, հարկ եղած դեպքում հնարավոր է ենթարկվել գնդակոծության (ինչպես դա եղել է 1992-1993թթ.) ապա ռազմավարական նշանակություն ունի գյուղի 2-րդ կամրջի վերականգնումը:

Նախնական հաշվարկներով կամուրջը բանուկ դարձնելու համար անհրաժեշտ է 7 մլն. դրամ: Ծրագիրը իրականացելու համար անհրաժեշտ է

ա) հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ Կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու համար:

բ) գտնել հովանավորներ՝ ծրագիրը ֆինանսավորելու համար:

ԾՐԱԳԻՐ 7

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ՝ 0.6 ԿՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԴՊՐՈՑԸ:

Համայնքի գլխավոր փողոցը վերջի անգամ ասֆալտապատվել է 1984-1985թթ.-ին: Փողոցի շահագործման ընթացքում այն լրիվ շարքից դուրս է եկել և տարվա բոլոր եղանակների համար դարձել է անանցանելի՝ ինչպես տրանսպորտի այնպես էլ բնակիչների համար:

Համայնքի դպրոցը գտնվում է փողոցի վրա: Դպրոցականների հատկապես ցածր դասարանցիների համար դպրոց հաճախելու խիստ դժվարություն է առաջանում: Փողոցի տարեկան խճապատումները ոչ մի արդյունք չեն տալիս: Մոտավոր հաշվարկներով ծրագրի նախահաշվային գինը կազմում է 21մլն ՀՀ դրամ:

Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հիմնախնդիրը բարձրացնել ՀՀ Կառավարության առջև՝ ծրագիրը ֆինանսավորելու: